ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1.

2022թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուս.տարվա տարեկան ծավալ ծանրաբեռնվածության ներկայացում, դասացուցակի հաստատում.
2. ՀՀ ԳԱԱ Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում գործող ֆիզիոլոգիայի -023 մասնագիտական խորհրդի որոշմամբ ՀՊՄՀ-ի ԱԲ,ԱԻ և ՔՊ ամբիոնի, որպես Լուսինե Մառլենի Խաչատրյանի ,,Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա միջինասիական կոբրայի թույնի և մելանինի պաշտպանիչ պայմաններում սև նյութի նեյրոնների սինապսային պրոցեսները կորտիկոնիգրալ պրոյեկցիայում,, թեմայով Գ.009 ,,Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա,, մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, առաջատար կազմակերպություն հանդես գալու հարցը:
3. ԱԲ, ԱԻ և ՔՊ ամբիոնում սեպտեմբերի 4-ին՝ Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա առթիվ սեմինար կազմակերպելու մասին հարցը:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս.տարվա տարեկան ծավալ ծանրաբեռնվածության ներկայացում, դասացուցակի հաստատում.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց 2022-2023 ուս.տարվա ծավալ ծանրաբեռնվածության հաստատված տարբերակը, որը հեռակա ուսուցման ընդունելության արդյունքներից հետո կփոխվի, բայց հաստիքային փոփոխություններ չեն լինի: Ամբիոնի ընդհանուր ժամաքանակը 6132 ժամ է, որից թափուր է մնացել 2377 ժամ: Ամբիոնի 3755 ժամը բաշխվել է ամբիոնի դասախոսների վրա: Նախորդ տարվա հաստիքաչափը փոխվել է, նախորդ տարվա 6 հաստիքից դառնալով 4,75 հաստիք: Ամբիոնի 1 դասախոս գտնվում է ֆիզ.արձակուրդում, 0,25 հաստիքով աշխատող Լ.Ղազարյանը հրամանագրվել է որպես ամբիոնի պրոֆեսորի խորհրդատու:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Լուսինե Մառլենի Խաչատրյանի ,,Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա միջինասիական կոբրայի թույնի և մելանինի պաշտպանիչ պայմաններում սև նյութի նեյրոնների սինապսային պրոցեսները կորտիկոնիգրալ պրոյեկցիայում,, թեմայով Գ.009

,,Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա,, մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության, առաջատար կազմակերպություն հանդես գալու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ ամբիոնը հանդես է գալու որպես առաջատար կազմակերպություն, ներկայացրեց ժամկետները, որի ընթացքում ամբիոնը պետք է պատրաստի կարծիք, առաջարկեց հաջորդ ամբիոնի նիստում քննարկել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3.- Սեպտեմբերի 4-ին՝ Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա առթիվ ամբիոնում սեմինար կազմակերպելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ն.Սահակյանը առաջարկեց Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա առթիվ ամբիոնում կազմակերպել սեմինար, Աղետներ, տարհանում թեմաներով: Հնարավորության դեպքում Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայից հրավիրել մասնագետ՝ ուսուցողական զեկուցումով թեման լուսաբանելու համար և ընդգրկել լավագույն ուսանողներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2.

2022թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա առթիվ սեպտեմբերի 4-ին կազմակերպված միջոցառման քննարկում.
2. 2022թ. ընթացքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակված գիտական հոդվածների քննարկում.
3. Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերաբերյալ հարցի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Արտակարգ իրավիճակների աշխատողի օրվա առթիվ սեպտեմբերի 4-ին ամբիոնում կազմակերպված միջոցառման քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը սեպտեմբերի 4-ին կազմակերպած միջոցառումը համարեց ստացված, միջոցառման թեման էր տարհանումը, կազմակերպման ձևերն ու եղանակները, ներկա էին դասախոսներ, համալսարանի քաղպաշտպանության շտաբի պետը, հոգեբանության և հատուկ կրթության ֆակուլտետի ուսանողները: Ելույթ ունեցան քաղպաշտպանության դասախոս Պ.Կարապետյանը, շտաբի պետ Լ.Հարությունյանը, ուսանողներ: Ներկայացրած թեմաները շատ հետաքրքիր էին, ուսանողները լիարժեք տիրապետում էին ինֆորմացիային, ակտիվորեն մասնակցում էին քննարկումներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպումը:

ԼՍԵՑԻՆ 2. – 2022թ. ընթացքում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հրատարակված գիտական հոդվածների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը դասախոսներին տեղեկացրեց, որ մինչև հոկտեմբերի 15-ը գիտահետազոտական կենտրոն պետք է ներկայացվեն 2022թ. ընթացքում տպագրված հոդվածները, ուսումնամեթոդական ձեռնարկները, մենագրությունները: Ուղարկված է ձևաչափ տվյալների մուտքագրման համար, որտեղ նշված է պարբերականի վերնագիրը, հատորը, համարը, ինչպես նաև հոդվածի էլեկտրոնային հղումը: Խնդրում եմ սեղմ ժամկետներում ուղարկեք ձեր տվյալները՝ գիտահետազոտական կենտրոն ներկայացնելու համար: Կարող են ներառվել նաև այն հոդվածներ, որոնք տպագրված չեն, ներկայացվել են տպագրության և մինչև տարվա վերջ կտպագրվեն:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի որակի պատասխանատու Գ.Մուշեղյանը ներկայացրեց ամբիոնում 1-ին կիսամյակում դասավանդվող բոլոր առարկաների համար նոր ձևաչափի պահանջներով պատրաստված առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Նշեց, որ դրանք հիմնականում համապատասխանում են նոր չափորոշիչների մոտեցումներին և պահանջներին, փոխվել են կրթական ելքային արդյունքների ձևակերպումները, ստուգվել են գնահատման բաղադրիչների ստանդարտները, փոխվել են չափանիշները: Հստակեցվել է յուրաքանչյուր բաղադրիչի տոկոսային միավորի ձևավորման չափորոշիչները: ՆՍահակյանը առաջարկեց հաստատել 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3.

2022թ. նոյեմբերի 1-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնի կանոնակարգի՝ ամբիոնի նիստերի անցկացման դրույթների մասին հարցի քննարկում:
2. Առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների՝ նոր ձևաչափով ներկայացնելու մասին հարցը:
3. Ամբիոնի հայցորդ Աշխեն Սահակյանի հրամանագրման և հետագա գործընթացի կազմակերպման մասին հարցը:
4. Ամբիոնի և ,,Դասավանդիր Հայաստանի,, հետ համագործակցություն հաստատելու և համայնքներ այցելություն կազմակերպելու մասին հարցը:
5. Բուհի 100-ամյակին նվիրված միջոցառումների մասին տեղեկատվություն և քննարկում:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի կանոնակարգի՝ ամբիոնի նիստերի անցկացման դրույթների և առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների՝ նոր ձևաչափով ներկայացնելու մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը անդրադառնալով ամբիոնի նիստերի վարման կարգին նշեց, որ նիստի մասին բոլոր դասախոսներին տեղեկացվում է նախապես և նրանց ներկայությունը պարտադիր է: Անդրադառնալով հեռակա ուսուցման դասընթացներում նոր ձևաչափով առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հարցին, դասախոսներին հանձնարարեց սեղմ ժամկետներում ներկայացնեն ամբիոնի նիստի հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի հայցորդ Աշխեն Սահակյանի հրամանագրման և հետագա գործընթացի կազմակերպման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը հայտնեց, որ նախկին կենսաբանության ֆակուլտետի շրջանավարտ Աշխեն Արմենի Սահակյանը հրամանագրվել է ամբիոնում որպես հայցորդ, երեք ամսվա ընթացքում ամբիոնի նիստում պետք է հաստատվի գիտական թեմայի և ղեկավարի

հարցը, վերահաստատվի ֆակուլտետի խորհրդի նիստում և մինչև հունվարի 19-ը գիտահետազոտական կենտրոն ներկայացվի տեղեկատվություն՝ գործընթացի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի և ,,Դասավանդիր Հայաստանի,, հետ համագործակցություն հաստատելու և համայնքներ այցելություն կազմակերպելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց ամբիոնի և ,,Դասավանդիր Հայաստան,, գրասենյակի հետ համագործակցություն հաստատելու մասին հարցը և առաջարկեց կազմակերպել այցելություններ սահմանամերձ տարբեր համայնքներ՝ տեղի միջին և ավագ դպրոցականների և ուսուցչական անձնակազմի հետ քաղպաշտպանության և հանրային առողջության թեմաներով դասախոսություններ կազմակերպելու նպատակով: Ինչպես նաև փոխհամագործակցության շրջանակներում կներկայացվեն ՀՊՄՀ-ի մասնագիտությունները և մանկավարժական կրթության առաջնահերթությունը սահմանամերձ շրջաններում: Անդրադառնալով բուհի 100 ամյակին նվիրված միջոցառումների շարքին նշեց, որ ամբիոնը բոլոր դասախոսներին ներկայացրել է պարգևատրման, որը բուհի ղեկավարության կողմից կտրվի 100-ամյա միջոցառումների շրջանակներում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4.

2022թ. դեկտեմբերի 2-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակում դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերի հաստատման հարցը.
2. ,,Դասավանդիր Հայաստանի,, հետ Վայոց ձորի Արենիի միջնակարգ դպրոց այցելության կազմակերպման մասին հարցը.
3. 2022 թ. ամբիոնի տարեկան հաշվետվության հաստատման հարցը.

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակում դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի որակի պատասխանատու Գոհար Մուշեղյանը նշեց, որ էլեկտրոնային տարբերակով դասախոսների կողմից ուղարկվել է հեռակա ուսուցման 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, որոնք համապատասխանում են նոր ձևաչափի պահանջներին և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել:

ԼՍԵՑԻՆ – ,,Դասավանդիր Հայաստանի,, հետ Վայոց ձորի Արենիի միջնակարգ դպրոց այցելություն կազմակերպելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ համաձայնություն է ձեռք բերվել Վայոց ձորի՝ որպես սահմանամերձ գոտի, Արենիի միջնակարգ դպրոցի տնօրինության հետ, դպրոցականների հետ հանդիպում կազմակերպելու նպատակով: Ն.Սահակյանը առաջարկեց այցելությունը կազմակերպել դեկտեմբերի 23-ին, ամբիոնի դասախոսներ Ա.Մարգարյանի և Պ.Կարապետյանի հետ, հանրային առողջություն և քաղպաշտպանություն թեմաներով դասախոսություններ կարդալու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ – 2022 թ. ամբիոնի տարեկան հաշվետվության հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը ներկայացրեց 2022թ. ամբիոնի տարեկան հաշվետվության տարբերակը, նշեց, որ ըստ սահմանված ձևաչափի տրված է լիարժեք տեղեկատվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել:

Ամբիոնի վարիչ՝	Ն.Ա.Սահակյան
Նիստի քարտուղար՝	Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5.

2023թ. հունվարի 16-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի հայցորդ՝ Աշխեն Արմնեի Սահակյանի թեմայի և ղեկավարի հաստատման հարցը.
2. Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի տարհանման մարմիններ ստեղծելու և ցանկ հաստատելու մասին հարցը՝ ըստ համապատասխան գրության.
3. Հեռակա համակարգում դասընթացների վարման և առկա համակարգում ամփոփիչ քննությունների կազմակերպման մասին հարցը.
4. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի հայցորդ Աշխեն Արմնեի Սահակյանի՝ «Օձի թույնի տարբեր չափաբաժինների ազդեցության ուսումնասիրությունը առնետների սրտային ռիթմի փոփոխականության և նշաձև համալիրի որոշ կորիզների նեյրոնային ակտիվության վրա» գիտական թեմայի և ղեկավարի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի պրոֆեսոր Հ.Գրիգորյանը, դոցենտներ Գ.Մուշեղյանը, Մ.Իսաջանյանը, Ա. Մարգարյանը ներկայացնելով գիտական թեմայի կարևորությունը և հետազոտության արդիականությունը գիտակրթական ոլորտում: Որպես թեմայի ղեկավար առաջարկեցին Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., դոցենտ՝ Նարինե Անատոլիի Սահակյանի թեկնածությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի հայցորդ՝ Աշխեն Արմնեի Սահակյանի գիտական թեման և գիտական թեմայի ղեկավար՝ Նարինե Անատոլիի Սահակյանի թեկնածությունը:

ԼՍԵՑԻՆ 2. – Երևան քաղաքի կենտրոն վարչական շրջանի տարհանման մարմիններ ստեղծելու և ցանկ հաստատելու մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ –Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ կենտրոն վարչական շրջանի ղեկավարի կողմից ստացվել է գրություն ռազմական դրության ժամանակ բնակչության նյութական, մշակութային արժեքների տարհանման միջոցառումները կազմակերպելու նպատակով

Կենտրոն վարչական շրջանում տարահանման հավաքակայաններ (ՏՀԿ) և ժամանակավոր տեղակայման կետեր (ԺՏԿ) ստեղծելու համար: Ստեղծվելու է հանձնաժողով, գործընթացը կազմակերպելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Ամփոփիչ քննությունների կազմակերպման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ ճշգրտված է առկա համակարգի առաջին կիսամյակի քննությունների գրաֆիկը, քննություններ լինելու են երեք առարկաներից, այս տարվա դասաբաշխման համաձայն ընթերականեր չեն լինելու, պատրաստ են քննական տոմսերը, առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել:

Ամբիոնի վարիչ՝	Ն.Ա.Սահակյան
Նիստի քարտուղար՝	Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6.

2023թ. մարտի 3-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ամբիոնի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերաբերյալ հարցի քննարկում.
2. Կրթական գործընթացների և բարեփոխումների վարչության կողմից ներկայացված պահանջի (երկու գնահատվող էլեկտրոնային առաջադրանք) վերաբերյալ հարցի քննարկում.
3. 2022-2023թ. դասալասումների կազմակերպման վերաբերյալ գրաֆիկի հաստատում.
4. 2022-2023թ. ավարտական աշխատանքներին վերաբերվող ընթացիկ հարցերի քննարկում.

ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի դասընթացների առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը նշեց, որ հավատագրման հետ կապված բուհում ստեղծվել է հանձնաժողով, որը բոլոր ամբիոնների որակի պատասխանատուի ներկայացուցչի հետ վերանայում է ամբիոնում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները: Ամբիոնի որակի պատասխանատու Գ.Մուշեղյանը ներկայացրեց երեք մասնագիտությունների՝ Հոգեբանություն, Կերպարվեստ և Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությունների վերջնական տարբերակով պատրաստված նկարագրերը, որոնք համապատասխանում են նոր չափանիշների մոտեցումներին և պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել:

ԼՍԵՑԻՆ 2. – Կրթական գործընթացների և բարեփոխումների վարչության կողմից ներկայացված պահանջի (երկու գնահատվող էլեկտրոնային առաջադրանք) վերաբերյալ հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսներին Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ Կրթական գործընթացների և բարեփոխումների վարչության կողմից ներկայացվել է նոր պահանջ, բոլոր դասընթացներում երկու գնահատվող էլեկտրոնային առաջադրանք տեղադնելու համար: Ելույթ ունեցան ամբիոնի դասախոսներ Ա.Մարգարյանը, Հ.Գրիգորյանը, Մ.Իսաջանյանը և

Պ.Կարապետյանը և առաջարկեցին ոչ մասնագիտական հոսքային առարկաների համար սահմանել մեկ գնահատվող էլեկտրոնային առաջադրանք, որովհետև դրանք դասավանդվում են մեկ կիսամյակով, ավարտվում են ստուգարքով, կիսամյակի ընթացքում նախատեսվում է նաև ընթացիկ ստուգում, որի ժամանակ կատարվում է բանավոր հարցում, և մեկ գնահատվող էլեկտրոնային առաջադրանքը բավարար է գիտելիքների ստուգման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – 2022-2023թ. դասալասումների գրաֆիկի և ավարտական աշխատանքների վերաբերյալ հարցերը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը ներկայացրեց 2022-2023թ. դասալասումների գրաֆիկը և անդրադարձավ ավարտական աշխատանքների հարցին, նշելով, որ առկա ուսուցման համակարգում ամբիոնը ունի 2 ավարտական աշխատանքի ղեկավարում, (ղեկավարներ Ն.Սահակյան, Ա.Մարգարյան), հեռակա ուսուցման համակարգում 1 ավարտական աշխատանքի ղեկավարում (ղեկավար Ա.Մարգարյան): Ն.Սահակյանը հանձնարարեց մինչև ավարտական քննությունների մեկնարկը պատրաստել ղեկավարի կարծիքները և գրախոսությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Ա.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Գ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7.

2023թ. ապրիլի 26-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանություններ.
2. Հեռակա բակալավր 5-րդ կուրսերի դասընթացներում առարկայական նկարագրերի, դասախոսությունների և էլեկտրոնային մատյանների վերաբերյալ հարցը.
3. Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ – Առկա բակալավր 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Անդրադառնալով ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների հարցին, Ն.Սահակյանը նշեց, որ կենսաբանություն 4-րդ կուրսում ամբիոնը ունի 2 ավարտական աշխատանքի ղեկավարում, Աստղիկ Խաչատրյանի (ղեկավար Ն.Սահակյան), և Շողեր Ավետյանի (ղեկավար Ա.Մարգարյան) մոտ, առաջարկեց լսել նրանց ելույթները և անել դիտողություններ: Ա.Խաչատրյանի ավարտական աշխատանքի թեման էր <<Ուսանողների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների բնութագիրը արտակարգ իրավիճակներում>>, որը ներկայացվեց շատ սահուն, Ա.Խաչատրյանը տիրապետում էր նյութին, կային փոքրիկ շտկումներ, որը խոստացավ փոխել: Շ.Ավետյանի թեման էր << Սիրտ-անոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի գնահատումը մանկավարժական համալսարանի ուսանողների մոտ արտակարգ իրավիճակներում>>, որտեղ նույնպես կային փոքրիկ թերություններ, որը նույնպես մինչև պաշտպանության ներկայանալը պետք է վերանայել: Ն.Սահակյանը ղեկավարներին հանձնարարեց պատրաստել ղեկավարի կարծիքները՝ ըստ ձևաչափի և գրախոսությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Աշխտանքները ներկայացնել պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ 2. – Հեռակա բակալավր 5-րդ կուրսերի դասընթացներում առարկայական նկարագրերի, դասախոսությունների և էլեկտրոնային մատյանների վերաբերյալ հարցը. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.սահակյանը նշեց, որ հեռակա բակալավր 5-րդ կուրսերում

պարապմունքները կազմակերպվում են ավելի շուտ, ուստի *google classroom* էլեկտրոնային հարթակում արդեն բացված են էլեկտրոնային դասընթացները, դասախոսներին հանձնարարեց մեկ անգամ ևս ստուգել առարկայական նկարագրերը և տեղադրել, ինչպես նաև հետևողական լինել էլեկտրոնային մատյաններում գրառումներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8.

2023թ. մայիսի 14-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հեռակա բակալավր 5-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Կիրակոսյանի ավարտական աշխատանքի նախապաշտպանության մասին հարցը.
2. Երկրորդ կիսամյակի միջանկյալ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում.
3. ՔՊ և ԱԻ առարկան դասավանդող մասնագետների վերապատրաստումների մասին.

ԼՍԵՑԻՆ – Կենսաբանություն 5-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Կիրակոսյանի ավարտական աշխատանքի նախապաշտպանության մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ավարտական աշխատանքների ղեկավար Ա.Մարգարյանը առաջարկեց լսել Գ.Կիրակոսյանի << Դեռահասների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրումը>> թեմայով ավարտական աշխատանքը, որը գրեթե պատրաստ է պաշտպանության: Արտահայտվեցին ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը, դասախոսներ Գ.Մուշեղյանը, Հ.Գրիգորյանը, որոնք նշեցին որ ավարտական աշխատանքի մեջ կան որոշ թերություններ, արեցին անհրաժեշտ դիտողությունները և Ն.Սահակյանը հանձնարարեց սեղմ ժամկետում վերանայել դրանք, շտկել սխալները, վերացնել բացթողումները և ներկայացնել առաջիկա ամբիոնի նիստի քննարկմանը: Գ.Կիրակոսյանը խոստացավ շտկել թերությունները և մինչև պաշտպանության ներկայանալը ներկայացնել ամբիոնի քննարկմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Երկրորդ կիսամյակի միջանկյալ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը տեղեկացրեց, որ ճշգրտված է երկրորդ միջանկյալ ստուգումների ժամանակացույցը և ամփոփիչ ստուգումների օրերը: Առաջարկեց երկու միջանկյալ ստուգում նախատեսվող դասընթացներում կազմակերպել միջանկյալները և նախատեսված ժամկետներում արդյունքները անցկացնել համակարգ: Անդրադարձավ նաև

երկրորդ կիսամյակի քննություններին, առաջարկեց հաստատել գրաֆիկը և քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

ԼՍԵՑԻՆ 3. – ՔՊ և ԱԻ առարկան դասավանդող մասնագետների վերապատրաստումների մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը ասաց, որ ԿԳՄՍ նախարարության կողմից ամբիոնին է փոխանցվել գրություն, ՔՊ և ԱԻ առարկայի գծով վերապատրաստումներին մասնակցող մասնագետների վերաբերյալ: Ն.Սահակյանը նշեց նաև, որ վերապատրաստումների ժամկետների մասին կուղարկվի լրացուցիչ տեղեկատվություն և առաջարկեց այդ առարկան դասավանդող մասնագետ Պ.Կարապետյանի և ամբիոնի դասախոս, կ.գ.թ.,դոցենտ Մ.Իսաջանյանի թեկնածությունը: Ամբիոնի դասախոսները հավանություն տեցին և որոշեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

Ամբիոնի վարիչ՝	Ն.Սահակյան
Նիստի քարտուղար՝	Մ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9.

2023թ. մայիսի 26-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023թ. ավարտական աշխատանքների քննարկում.
2. Բուհի հավատագրման գործընթացների հետ կապված հարցերի քննարկում.
3. Երևանի միջազգային դպրոցի և Գավառի բժշկական քոլեջի հետ համագործակցության մասին հարցը.
4. Երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման դասացուցակի և քննական տոմսերի հաստատման հարցը.

ԼՍԵՑԻՆ – 2022-2023թ. ավարտական աշխատանքների քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Անդրադառնալով ավարտական աշխատանքների արդյունքներին, Ն.Սահակյանը նշեց, որ ամբիոնը ղեկավարել է կենսաբանություն մասնագիտության առկա բակալավր 4-րդ կուրսում երկու և հեռակա բակալավր 5-րդ կուրսում մեկ ավարտական աշխատանք, ուսանողները ներկայացել են շատ պատրաստված և ստացել են բարձր գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Բուհի հավատագրման գործընթացների հետ կապված հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հավատագրման գործընթացների հետ կապված Ն.Սահակյանը նշեց, որ վերանայվելու են երեք մասնագիտություններում՝ հոգեբանություն, կերպարվեստ և տարրական կրթություն, առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, հանձնարարեց ամբիոնի որակի պատասխանատու Գ.Մուշեղյանին վերանայել դրանք և ներկայացնել որակի ապահովման հանձնաժողովի քննարկմանը: Ն.Սահակյանը նշեց նաև, որ ֆակուլտետներում ներքին աուդիտը անցկացնում է ստուգումներ, վերանայվում են փաստաթղթերը, ՄԿԾ-ները, պետք է վերանայել ամբիոնի փաստաթղթաշրջանառության ամբողջ ցանկը և համապատասխանեցնել ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 3. – Երևանի միջազգային դպրոցի հետ համագործակցության և քննական տոմսերի հաստատման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը առաջարկեց Դպրոց-Բուհ համագործակցության շրջանակներում «Առողջ ապրելակերպ» թեմայով կազմակերպել համատեղ սեմինար Երևանի միջազգային դպրոցի միջին և բարձր դասարանի աշակերտների և Գավառի բշժկական քոլեջի ուսանողների հետ: Ն.Սահակյանը նշեց, որ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել դպրոցի սովորողների բուժօգնության սպասարկման պատասխանատու Դուստրիկ Գասպարյանի և Գավառի բժշկական քոլեջի տնօրենի հետ, կճշտի ժամկետները և կտեղեկացնի դասախոսներին: Հաստատվեց նաև 2022-2023 ուս.տարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման գրաֆիկը և քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Ամբիոնի վարիչ՝ Ն.Սահակյան

Նիստի քարտուղար՝ Մ.Վիրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10.

2023թ. հունիսի 30-ին տեղի ունեցավ ,,Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության,, ամբիոնի նիստ՝ ամբիոնի բոլոր աշխատակիցների մասնակցությամբ:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում.
2. Տարեվերջյան ինքնագնահատում և ինքնավերլուծություն.
3. ԿԳՄՍ նախարարության հայտարարած ուսուցիչների կամավոր ատեստավորման առարկայական վերապատրաստման մասին հարցը.
4. Երևանի միջազգային դպրոցի աշակերտների համար կազմակերպված համատեղ սեմինարի քննարկում
5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ – 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամփոփելով 2022-2023 ուս.տարվա երկրորդ կիսամյակի արդյունքները, Ն.Սահակյանը նշեց, որ առկա ուսուցման համակարգում ավարտվեցին միջանկյալ և ամփոփիչ ստուգումները, որոնք կազմակերվել էին քննական գրաֆիկի համապատասխան, արդյունքները ժամկետներում անցկացվել են գնահատման էլեկտրոնային համակարգ, հեռակա համակարգում ավարտվեցին պարապմունքները, միջանկյալները նախատեսվում են օգոստոսին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 2. – Տարեվերջյան ինքնագնահատում և ինքնավերլուծություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Անդրադառնալով տարեվերջյան ինքնագնահատման և ինքնավերլուծության հարցին, Ն.Սահակյանը դասախոսներին ներկայացրեց 2022-2023 ուս.տարվա SWOT վերլուծությունը, որտեղ ներկայացվել են ամբիոնի ուժեղ և թույլ կողմերը, վտանգները, հնարավորությունները և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

ԼՍԵՑԻՆ 3. – ԿԳՄՍ նախարարության հայտարարած ուսուցիչների կամավոր ատեստավորման առարկայական վերապատրաստման մասին հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ն.Սահակյանը նշեց, որ հունիսի 21-ից հուլիսի 12-ը ՀՊՄՀ-ում մեկնակեց ԿԳՄՍ նախարարության հայտարարած կամավոր ատեստավորման արդյունքում ցածր միավորներ հավաքած ուսուցիչների կամավոր ատեստավորման վերապատրաստման փուլը և թվով 160 ուսուցիչներ անցնելու են վերապատրաստումներ տարբեր առարկաներից: Կենսաբանություն առարկայի գծով վերապատրաստումը վստահված է Առաջին բուժօգնության ամբիոնին և անցկացվելու է ամբիոնի վարիչ Ն.Սահակյանի կողմից: Դասընթացը ներառում է տեսական և գործնական մաս, նպատակն է օգնել ուսուցիչներին լրացնելու և հարստացնելու մասնագիտական գիտելիքները և այն դպրոցում կիրառելու հնարավորությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ 4. – Երևանի միջազգային դպրոցի աշակերտների համար կազմակերպված համատեղ սեմինարի քննարկման հարցը.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ն.Սահակյանը նշեց, որ հունիսի 22-ին Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնը և ՀՀ ԱՆ Կախվածությունների բուժման ազգային կենտրոնը Երևանի միջազգային դպրոցի (QSI International School of Yerevan) հրավերով միջին և բարձր դասարանի աշակերտների համար «Առողջ ապրելակերպի» շրջանակներում կազմակերպել էին սեմինար: Առաջին բուժօգնության, ԱԻ և ՔՊ ամբիոնի դոցենտ Աննա Մարգարյանը, ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի» դիսպանսերային ծառայության ղեկավար Հարություն Սիմոնյանն ու 2-րդ ստացիոնար բաժանմունքի բժիշկ Աննա Ծառուկյանը համատեղ ներկայացրեցին առողջ ապրելակերպի հիմնախնդիրները: Բ.գ.թ. Աննա Մարգարյանը ներկայացրեց ճարպակալման, ավելցուկային քաշի, Էներգետիկ ըմպելիքների չարաշահման ազդեցությունն ու դրանց բացասական հետևանքները դեռահասների օրգանիզմի վրա: Կախվածությունների բուժման ազգային կենտրոնի մասնագետները դեռահասներին իրազեկեցին թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի վնասակար ազդեցության հետևանքներիմասին: Սեմինարի ընթացքում ծավալվեց հարց ու պատասխան. մասնագետները պատասխանեցին աշակերտներին հետաքրքրող հարցերին, ներկայացված թեմաների վերաբերյալ ստացան սպառիչ պատասխաններ: Դպրոցի՝ սովորողների բուժօգնության սպասարկման պատասխանատու Դուստրիկ Գասպարյանը, տնօրենության անունից շնորհակալություն հայտնեց կառույցների ներկայացուցիչներին՝ համատեղ սեմինարի անցկացման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Շարունակել նմանատիպ միջոցառումների կազմակերպումը:

Ամբիոնի վարիչ՝	Ն.Սահակյան
Նիստի քարտուղար՝	Մ.Վիրաբյան